

Շրջանավարտների կայքի նախագծում

Ձեռնարկության անունը՝ **ՀՖՀՀ**

Ծրագրի անունը՝ **Շրջանավարտների կայք**

Կոնտակտային անձ՝ **Ասյա Մովսիսյան**

Հասցե՝ **Դավիթ Անհաղթ 10**

Հեռ.՝ **+374 91 555072**

Էլ. փոստ՝ **asya.movsisyan@pers.ufar.am**

Կայքի նկարագրական բնութագրերը

1.1 – Կայքի դերը համալսարանի ռազմավարության մեջ

Շրջանավարտների կայքը նախատեսվում է ծառայելու որպես հարթակ համալսարանի և իր շրջանավարտների համար՝ նպատակ ունենալով

- ✓ օգնել նրանց ավելի հեշտությամբ գտնել միմյանց և շփման մեջ մտնել միմյանց հետ,
- ✓ ծառայել որպես աշխատակիցների որոնման գործիք իրենց ընկերությունների համար,
- ✓ հեշտացնել ՀՖՀՀ-ի և նրա առաջարկների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը,
- ✓ բարելավել շրջանավարտների ձեռքբերումների (հրապարակումներ, հոդվածներ և այլն) տեսանելիությունը,
- ✓ թույլ տալ նրանց համախմբվել ըստ հետաքրքրությունների ոլորտների,

ինչպես նաև

- ✓ ավելի լավ տեսանելիություն ապահովել համալսարանի համար
- ✓ օգնել գործընկեր ընկերություններին՝ նոր աշխատակիցների հավաքագրման համար թեկնածուներ գտնելու գործընթացում՝ նրանց առաջարկելով որակյալ ինքնակենսագրադարան
- ✓ ամրապնդել ՀՖՀՀ-ի փորձագիտական հեղինակությունը որոշակի թեմաների շուրջ

1.2 – Կայքի հիմնական թիրախը՝

- ✓ ՀՖՀՀ շրջանավարտներ
- ✓ Հայկական և միջազգային ձեռնարկություններ

Աշխարհագրական առումով շրջանավարտների մեծամասնությունը Հայաստանում է, բայց շատերն ապրում և աշխատում են արտերկրում:

Նկատի ունենալով, որ ձեռնարկությունների մեծ մասի աշխատանքային լեզուն անգլերենն է, կայքը պետք է լինի բազմալեզու՝ հայերեն, ֆրանսերեն, անգլերեն:

1.3 - Կայքի որակական և քանակական բնութագրիչներ

- որակական հատկանիշներ
  - ✓ ունենալ ինքնակենսագրադարան՝ հասանելի ՀՖՀՀ-ի գործընկեր ձեռնարկություններին
  - ✓ սոցիալական ցանցերում կիսվելու հնարավորություն
  - ✓ շաբաթվա հրապարակումները պարունակող տեղեկատվական նամակի ավտոմատ ուղարկում
  - ✓ թերթվող լուրեր
  - ✓ տեսանյութեր, լուսանկարներ, տեքստեր

- Օգտատերերի քանակը
  - ✓ 3000 շրջանավարտ + 150 ձեռնարկություն (2022թ. մայիսին)
  - ✓ 5000+ շրջանավարտ (2025թ.-ին)

2 – Գործառնական և տեխնիկական ասպեկտները

2.1 - Կայքի կառուցվածքը

Կայքի հիմնական էջերը, հիմնական բաժինները և ենթաբաժինները



2.2 – Գործառնական նկարագիր

Օգտատերերը տեսնում են էջերը և գլուխների վերնագրերը, սակայն բուն տեղեկատվությունը հասանելի է միայն նույնականացում անցնելուց հետո:

Նույնականացումը կատարվում է երկու տեսակի պրոֆիլներով. **Շրջանավարտները** և **Ձեռնարկությունները** համալսարանից ստանում են «օգտանուն» և «գաղտնաբառ», որոնք կարող են այնուհետև փոփոխել:

Շրջանավարտների պրոֆիլներում որոշ դաշտեր լրացված են Համալսարանի կողմից (ստացած դիպլոմի մակարդակ, մասնագիտություն և ավարտական տարի), բայց նաև կա հնարավորություն **դաշտեր ավելացնելու** վերապատրաստման, հավաստագրերի, փորձի, հմտությունների համար: Շրջանավարտներն ունեն **LinkedIn**-ից տվյալներն արտահանելու հնարավորություն:

Ձեռնարկությունների պրոֆիլները լրացվում են հենց ձեռնարկությունների կողմից: (ձեռնարկության տեսակը, գործունեության ոլորտը, աշխատողների թիվը, համառոտ նկարագրությունը): Ձեռնարկությունների համար հասանելի կլինի **Ինքնակենսագրադարանը** (կիսով չափ հանրային ինքնակենսագրականներով), որտեղ հիմնաբառերի օգնությամբ կարող են որոնել իրենց ուզած պրոֆիլները:

Կայքն ունի իր **Ադմինիստրատոր(ներ)ը,** որը կարող է հրապարակել, հաստատել այլ օգտատերերի հրապարակումները, հաստատել առաջարկվող «Միջոցառումները»:

Պրոֆիլները բազմալեզու են:

2.2.1 – Գլխավոր էջ

Մեր մասին բաժինը ներկայացնում է ընդհանուր տեղեկություններ ՀՖՀՀ-ի շրջանավարտների մասին, վիճակագրական տվյալներ, վիճակագրությունն ըստ տարիների, ըստ մասնագիտությունների, աշխատունակության վիճակագրությունն ըստ տարիների և ըստ մասնագիտությունների, մասնագիտական ներգրավման աշխարհագրական վիճակագրություն, (*գրաֆիկներ, պատկերներ, լուսանկարներ և տեսանյութեր տեղադրելու հնարավորություն):

Պրոֆիլ	Տեսնում է	Ստեղ-ծում է	Փոփո-խում է	Հաստա-տում է
Այցելու	X			
Շրջանավարտ	X			
Ձեռնարկություն	X			
Ակումբի անիմատոր	X			
Կայքի մոդերատոր	X	X	X	X
Կայքի ադմինիստրատոր	X	X	X	X

Քարտեզ բաժինը ներկայացնում է աշխարհի քարտեզը՝ հնարավորություն տալով տեսնել այն վայրերը, որտեղ կարելի է գտնել մեր Շրջանավարտներին: Քարտեզի վրա հնարավոր կլինի գտնել այն շրջանավարտներին, որոնք իրենց ձևաթղթում լրացրել են «երկիր/քաղաք» դաշտը:

Պրոֆիլ	երկիր / քաղաք	Շրջան. քանակ	Շրջան.-ի պրոֆիլներ ը
Այցելու	X		
Շրջանավարտ	X	X	X
Ձեռնարկություն	X	X	X
Ակումբի անիմատոր	X	X	X
Կայքի մոդերատոր	X	X	X
Կայքի ադմինիստրատոր	X	X	X

Ծառայություններ բաժնում ներկայացված են ՀՖՀՀ-ի շրջանավարտների կողմից առաջարկվող մասնագիտական ծառայությունները: Շրջանավարտները հրապարակում են իրենց առաջարկը՝ լրացնելով հետևյալ դաշտերը՝ ծառայություն/ոլորտ/ընկերության անվանում/երկիր/նկարագրություն (տես ավելին) + հիմնաբառեր/կոնտակտներ:
«Տեսնել ավելին» բաժինը օգտատերերին վերահղում է դեպի համապատասխան ընկերությունների կայքերը:
Հիմնաբառերով որոնման հնարավորություն, զտման հնարավորություն ըստ վերը նշված դաշտերի:

Պրոֆիլ	Տեսնում է	Ստեղ-ծում է	Փոփո-խում է	Հաստա-տում է
Այցելու	X			

Շրջանավարտ	X	X	X	
Ձեռնարկություն	X			
Ակումբի անիմատոր	X			
Կայքի մոդերատոր	X	X	X	X
Կայքի ադմինիստրատոր	X	X	X	X

Կոնտակտներ բաժնում բացվում է կայքի ադմինիստրացիային ուղղված նամակ գրելու պատուհան:

2.2.2 – Տեղեկատու

Տեղեկատու բաժինը ներկայացնում է ՀՖՀՀ շրջանավարտների ցանկ՝ ըստ տարիների, ըստ դիպլոմի, մասնագիտության, անուն ազգանունի որոնման և զտման հնարավորությամբ:

Տեղեկատուի ցանկը ներառում է հետևյալ տեղեկությունները. ազգանուն, անուն, դիպլոմ(ներ), ավարտելու տարեթիվ(թվեր), լուսանկար, բնակության երկիր:

Պրոֆիլ	Տեսնում է	Ստեղ-ծում է	Փոփո-խում է	Հաստա-տում է
Այցելու	X			
Շրջանավարտ	X		X	
Ձեռնարկություն	X			
Ակումբի անիմատոր	X			
Կայքի մոդերատոր	X	X	X	X
Կայքի ադմինիստրատոր	X	X	X	X

Ինչ տեղեկատվություն է հասանելի օգտատերերին

Պրոֆիլ	Ազգանուն	Դիպլոմ	Մասնագի-տություն	Ավարտելու տարեթիվ	Երկիր	Նկար	Տվյալներ
Այցելու	X	X	X				
Շրջանավարտ	X	X	X				
Ձեռնարկություն	X	X	X				
Ակումբի անիմատոր	X	X	X				
Կայքի մոդերատոր	X	X	X	X	X	X	X
Կայքի ադմինիստրատոր	X	X	X	X	X	X	X

Տեղեկատուն հասանելի է նաև Աշխարհի քարտեզից (2.2.1).

Շրջանավարտ պրոֆիլները կարող են լինել **բաց կամ փակ՝** իրենց հետ կապվելու հնարավորություն տալով կամ ոչ: Հաղորդագրությունների համակարգը հնարավորություն է տալիս կապ հաստատել բաց պրոֆիլ ունեցող շրջանավարտի հետ, հաղորդագրություններն ավտոմատ կերպով նրան ուղարկվում են էլ. փոստով: Շրջանավարտները չեն կարող օրական 5-ից ավելի հաղորդագրություն ուղարկել:

2.2.3 – Օրացույց և միջոցառումներ

Առաջիկա միջոցառումներ բաժինը ներկայացնում է գալիք միջոցառումների ցանկը ժամանակագրական կարգով, միջոցառման հայտարարություն, որը պարունակում է լուսանկար / տեսանյութ / միջոցառման նկարագրություն / գտնվելու վայրը (քաղաքի քարտեզի վրա տեսնելու հնարավորություն) / ամսաթիվը (հիպերհղումով « օրացույցին » միացված) գրանցման կարգը / գրանցմանն անցնելու հղումը / գրանցման համար վճարը:

Պրոֆիլ	Տեսնում է	Ստեղ-ծում է	Փոփո-խում է	Հաստա-տում է	Գրանց-վում է
Այցելու	X				
Շրջանավարտ	X				X
Ձեռնարկություն	X				
Ակումբի անիմատոր	X	X	X		
Կայքի մոդերատոր	X	X	X	X	
Կայքի ադմինիստրատոր	X	X	X	X	

Անցած միջոցառումներ բաժինը ներկայացնում է անցած միջոցառումների ցանկը ժամանակագրական կարգով – Միջոցառման նկարագրությունը, որը պարունակում է լուսանկարներ/տեսանյութեր/ վայրը/ ամսաթիվը/ միջոցառման մասին բլոգում հրապարակված հոդվածներ:

Պրոֆիլ	Տեսնում է	Ստեղ-ծում է	Փոփո-խում է
Այցելու	X		
Շրջանավարտ	X		
Ձեռնարկություն	X		
Ակումբի անիմատոր	X	X	X
Կայքի մոդերատոր	X	X	X

Ստեղծել միջոցառում բաժինը ներառում է ձևաթուղթ, որը պետք է լրացվի՝ միջոցառման ստեղծման առաջարկ ներկայացնելու համար, ստեղծված միջոցառումը կայքում կհայտնվի միայն կայքի ադմինիստրատորի կողմից վավերացումից հետո: Ձևաթուղթը պարունակում է տեղեկատվության հետևյալ դաշտերը՝ միջոցառման անվանումը, ամսաթիվը, վայրը (նշումով քաղաքի քարտեզի վրա), համառոտ ներկայացում, մասնակիցների թիվը (նվազագույն/առավելագույն), մասնակցության պայմանները, ներբեռնվող լուսանկար կամ պաստառ: Ցանկացած ակումբի/բաժնի անիմատոր կարող է միջոցառում առաջարկել:

Պրոֆիլ	Տեսնում է	Ստեղ-ծում է	Փոփո-խում է	Հաստա-տում է
Այցելու	X			
Շրջանավարտ	X	X		
Ձեռնարկություն	X			
Ակումբի անիմատոր	X	X		
Կայքի մոդերատոր	X	X	X	X
Կայքի ադմինիստրատոր	X	X	X	X

Լուսանկարների պատկերասրահ: **«Լուսանկարների պատկերասրահ»** բաժնում կարելի է գտնել կայքի ցանկացած բաժնում (ներկայացում, միջոցառումներ, նորություններ, ցանցեր և այլն) ադմինիստրատորի կողմից վերբեռնված բոլոր լուսանկարները: Այս բաժինը ենթադրում է ըստ հիմնաբառերի զտման հնարավորություն:

Տեսադարան: **«Տեսադարան» բաժնում** կարելի է գտնել ադմինիստրատորի կողմից կայքերում տեղադրված տեսանյութերը՝ ըստ միջոցառման վերնագրի, ամսաթվի և կայքի ադմինիստրատորի կողմից սահմանված հիմնաբառերի զտման հնարավորությամբ:

2.2.4 – Նորություններ

Նորություններ բաժինը ներկայացնում է նորություններ՝ կապված մեր շրջանավարտների կարիերայի հետ՝ առաջխաղացումներ, մրցանակներ, շքանշաններ, հրապարակված հոդվածներ կամ լրատվամիջոցներով հեռարձակվող զեկույցներ:

Դիմանկար (մասնագիտական ուղի) բաժնում ներկայացված են հոդվածներ/վիդեո հարցազրույցներ շրջանավարտների մասնագիտական ուղու մասին: Տեսազրույցի դեպքում հասանելի է նաև սղագրությունը:

Ամսագիր բաժնում ամեն ամիս ներկայացվում է ամսվա ողջ տեղեկատվությունը պարունակող ամբողջական նյութ: (Լուսանկարների, տեքստերի, հղումների հնարավորություն):

2.2.5 – Ցանցեր

Խմբեր՝ ըստ երկրների բաժնում շրջանավարտը կամ շրջանավարտների խումբը կարող է առաջարկել ստեղծել Խումբ՝ Ֆրանսիայի խումբ, Գերմանիայի խումբ, Կանադայի խումբ և այլն: Յուրաքանչյուր խումբ ունի իր **Անիմատորը**: Խմբի անդամները կարող են հրապարակել հոդվածներ, լուսանկարներ, տեսանյութեր, տալ հարցեր, թողնել մեկնաբանություններ: Այլ շրջանավարտների՝ խմբին անդամակցության հայտերը ուսումնասիրվում և մշակվում են Անիմատորների կողմից: Նախատեսել 50-ից 100 խումբ ունենալու հնարավորություն:

Ակումբներ՝ ըստ մասնագիտությունների բաժնում շրջանավարտները կարող են խմբավորվել ըստ մասնագիտությունների՝ Թվային մարքեթինգ, Մարդկային ռեսուրսներ և այլն: Յուրաքանչյուր ակումբ ունի իր **Անիմատորը**: Ակումբի անդամները կարող են հրապարակել հոդվածներ, լուսանկարներ, տեսանյութեր, տալ հարցեր, թողնել մեկնաբանություններ: Այլ շրջանավարտների՝ ակումբին անդամակցության հայտերը ուսումնասիրվում և մշակվում են Անիմատորների կողմից: Նախատեսել 20-ից 30 ակումբ ունենալու հնարավորություն:

Ակումբներ՝ ըստ ավարտելու տարեթվի բաժնում շրջանավարտները կարող են խմբավորվել ըստ ավարտելու տարեթվի: Յուրաքանչյուր ակումբ ունի իր **Անիմատորը**: Ակումբի անդամները կարող են հրապարակել հոդվածներ, լուսանկարներ, տեսանյութեր, տալ հարցեր, թողնել մեկնաբանություններ: Այլ շրջանավարտների՝ ակումբին անդամակցության հայտերն ուսումնասիրվում և մշակվում են Անիմատորների կողմից: Նախատեսել 20-ից 30 ակումբ ունենալու հնարավորություն:

Ակումբներ՝ ըստ հետաքրքրությունների բաժնում շրջանավարտները կարող են խմբավորվել ըստ հետաքրքրության ոլորտների՝ «արշավականների ակումբ», «Կինոսերների ակումբ» և այլն: Յուրաքանչյուր ակումբ ունի իր **Անիմատորը**: Ակումբի անդամները կարող են հրապարակել հոդվածներ, լուսանկարներ, տեսանյութեր, տալ հարցեր, թողնել մեկնաբանություններ: Այլ շրջանավարտների՝ ակումբին անդամակցության հայտերը ուսումնասիրվում և մշակվում են Անիմատորների կողմից: Նախատեսել 20-ից 30 ակումբ ունենալու հնարավորություն:

Ընդհանուր բլոգ բաժնում շրջանավարտները կարող են հրապարակել ավելի ընդհանուր թեմաներով հոդվածներ, լուսանկարներ և տեսանյութեր, որոնք կարող են դիտել կայքի բոլոր օգտատերերը՝ «հավանելու» հնարավորությամբ:

2.2.6 – Կարիերա

«Կարիերա», «Կարիերայի աջակցություն» և «Աշխատանքի առաջարկներ» բաժինները վերահղվում են ՖԿԹԿ-ի վեբկայքին (Ֆրանկոֆոն կարիերայի թվային կամպուս), որն այլևս չի պահանջում լրացուցիչ նույնականացում, եթե դուք արդեն գրանցված եք Շրջանավարտների կայքում: